

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՒԱԾ՝
ՊԷՅՐՈՒԹԻ Զ.Կ.Բ.Մ.-Ի ՍԱՀԱԿԵԱՆ-ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ
ԳՈԼԷԾԻ ՏՆՕՐԷՆԻՆ

4 Նոյեմբեր 2002
CAGRES SOPHER

Յարգարժան Պրն. Յակոբ Կերկերեան Զ.Կ.Բ.Մ.-ի
Սահակեան-Լեւոն Մկրտիչեան գոլէճի տնօրէն,

ԵԼ

Յարգարժան Պրն. Ալետիս ~~Սահակեան~~ շողլեան Սահակեան-
Լեւոն Մկրտիչեան գոլէճի Ռուբէն Սեւակի անուան
Մատենադարանի Պատասխանատու,

Ատենին ստացայ ձեր 29 Յունուար 2002 թուակիր նամակը,
որուն համար իմ խորին շնորհակալութիւնները կը
յայտնեմ:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ԵԼ կը շնորհաւորեմ ձեզի՝
Ռուբէն Սեւակի անուան Մատենադարանը մինչեւ այսօր
ամենէն լաւ պայմաններու մէջ պահելու յաջողութեան
համար:

Բայց այստեղ կ'ուզէի հարցում մը ուղղել ձեզի.

Արդեօք 23 Ապրիլ 1994ին Ռուբէն Սեւակի անուան
Մատենադարանին պաշտօնական բացման
հանդիսութեան օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մեծի Տանն
Կիլիկիոյ Կաթողիկոսին, Շամիրամ Սեւակին ԵԼ նաեւ բոլոր
ելոյթ ունեցողներուն խանդավառ մաղթանքները
իրագործուած են: Այսինքն, Ռուբէն Սեւակի անուան
Մատենադարանը՝ նահատակ բանաստեղծ-գրող Ռուբէն
Սեւակի հայրենասիրական գաղափարներուն
տարածման կեդրոն մը եղա՞ծ է:

Ռուբէն Սեւակի անուան Մատենադարանի
բարերարներուն առաջնակարգ նպատակը այս եղած էր:

Առ ի տեղեկութիւն ձեզի կ'ուզեմ յայտնել, թէ 23 Ապրիլ 1994-ի հանդիսութեան մանրամասնութիւնները այդ թուականին յաջորդող օրերուն հրատարակուած թերթերուն եւ մա՛նսական «Արարատ»ին մէջ կրնաք կարդալ:

Բայց այս փառաւոր հանդիսութեան ամենէն լաւ ձեւով կրնաք տեղեակ ըլլալ այն օրը պատկերահանուած տեսերիզէն:

Ես յաճախ ու մեծ հաճոյքով կը դիտեմ այս «vidéo»ն եւ հայկականութեամբ լեցուն այս պատմական օրը՝ կրկին ու կրկին կ'ապրիմ:

Ձեզ իմ լաւագոյն յաջողութեան մաղթանքները կը յայտնեմ՝ հայապահպանման ձեր դժուարին աշխատանքներուն մէջ:

Յարգանքներով՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

4 Ապրիլ 2002
Cagnes-sur-Mer